Ալեքսանդր Ծատուրյան

Անքուն գիշեր

Խորին գիշեր է: Բուռն տենչանքով
Ես քուն եմ խնդրում, քուն չկա աչքիս.
Բարձրս թրջում եմ աղի՜ արցունքով,
Այնքա՜ն հուզված է ցավատանջ հոգիս:

Եվ շուրջս տիրած թանձր խավարում
Ծանր խոկումներ, դառն զգացումներ
Ճնշում են հոգիս, միտքս պաշարում,
Եվ հանդես բերում ահեղ տեսիլներ:

Տեսնում եմ արյուն, դժոխքի տանջանք
Ոտնակոխ եղած հայրենի երկրում.
Ապիկա՜ր բողոք, անհո՜ւյս աղերսանք,
Արնաներկ տապար դահիճի ձեռում...

Եվ սիրտ մորմոքող լաց, կոծ, աղաղակ
Արյուն ու հրդեհ, անգութ ավերած
Բռնել է և՛ գյուղ, և՛ շեն. և՛ քաղաք.
Եվ լուռ՝ երկնքից նայում է աստված...

Եվ դու վիզ ճըկած, հուսահատ դեմքով,
Իմ անճա՛ր եղբայր անճա՛ր մոր զավակ.
Դու խաչ ես հանվում չարախինդ երգով,

Օ՜, արևելքի ծաղրված նահատա՛կ:

Ա՜հ, սև տեսիլներ... ողբո՛ւմ եմ անզոր,
Եվ ջերմ կարոտում վառ լուսաբացին.
Շո՛ւտ ծագիր, արփի, հասի՛ր, պայծառ օր,
Գուցե, դուք վերջ տաք իմ սուգ ու լացին...